

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/9
20 փետրվարի 2018թ.**

Քննարկվեց «ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ միջնորդությունը 20.01.2018թ. ներկայացված ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ բերված փաստարկները.

«ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից 20.01.2018թ. սխալմամբ ներկայացվել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Հաշվի առնելով, որ ընկերությունը բավարարում է շրջանառության հարկ վճարող համարվելու համար օրենսդրությամբ սահմանված պայմաններին, ընկերությունը փորձել է սահմանված ժամկետում՝ մինչև 2018թ. փետրվարի 20-ը, ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, սակայն գործող հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը թույլ չի տվել:

Ընկերությունը խնդրում է բավարարել սահմանված ժամկետում շրջանառության հարկ վճարող համարվելու դիմումը և թույլատրել մինչև 2018թ. փետրվարի 20-ը անցնել շրջանառության հարկ վճարողների դաշտ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն 2017թ. ընթացքում հանդիսացել է շրջանառության հարկ վճարող:

Միաժամանակ, ընկերության 2017թ. իրացման շրջանառությունը չի գերազանցել 115.0 մլն դրամը և կազմել է 21.7 մլն դրամ: Այսինքն, ընկերությունը բավարարել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար, սակայն 20.01.2018թ. էլեկտրոնային եղանակով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու փոխարեն թյուրիմացաբար ներկայացվել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Իր հերթին, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում «ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ընկերությունն ինքնուրույն հայտնաբերել է տեղի ունեցած թյուրիմացությունը և մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի ավարտը՝ 20.02.2018թ., հայտնել է այդ մասին, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ընկերությանը շտկելու իր կողմից թույլ տրված սխալը (թյուրիմացությունը), ինչպես նաև թույլատրել սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Անվավեր ճանաչել «ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 20.01.2018թ. ներկայացված ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

2. «ԱՐՄ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից մինչև 20.02.2018թ. սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում ընկերությանը համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ